

բարձրադոյն դպրոցը։ Երաժշտական կրթութիւնը ստացել էր Բերդինի համալսարանում։ Շնորհալի դաշնակահար էր եւ երգահան։ Փայլուն քննադատ էր եւ երաժշտութեան տեսարան։ Ունի մի չարք արժէքաւոր երկեր՝ Բեթհովենի, Մոցարտի, Վերտիի մասին։ Բեթհովենի մասին հեղինակած նրա 1000 էջոց ուսումնասիրութիւնը նրան տեղ երոպական համբաւ։ Հրատարակել է նաև բազմաթիւ յօդւածներ ուսուսական եւ կովկասեան երաժշտութեան մասին։ Ի մի-ջի այլոց՝ «Կովկասեան Երաժշտութիւն» գրքոյկը։

Խորհրդայնացումից յետոյ, Դորզանեանը, չկամենալով գործունեալ բոլցելիկների հետ, տարագրւեց արտասահման եւ երկար ժամանակ ապրեց Փարիզում։ Բոլցելիկները գրաւեցին նրա հարուստ գրադարանը եւ արժէքաւոր պատմական նիւթերի հաւաքածոները, որոնց մէջ կային եղակի վաւերագրեր։ Սրանից 6-7 տարի առաջ, նա վերագրածաւ Կովկաս, հաստատեց Երեւանում եւ նւիրեց իր մասնագիտութեան՝ ուսուցչական եւ դրական գործունէութեան, այլեւ դասաւորեց իր «Գիւան»-ի նիւթերը։ Գրի է առել նաև իր յուշերը, որոնք դեռ անտիպ են։ Այդտեղ նա խօսում է, ի միջի այլոց, Զայկովսկու, Ռուբինչտյնի եւ Վերտիի մասին, որոնց հետ մտերիմ ծանօթ էր։

V

ՄԱՆՈՒԵԼ ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

Յուլիսի առաջին կէսին, Ռումանիայի ֆոքչան քաղաքում, 80 տիկայ հասակում, մեռու Մանուէլ Միրախորեանը։ Հանգուցեալլ վանեցի էր, Խրիմեանի չնչի տակ դաստիարակւած կրթական ու գրական գործիք։ 1870ական թւականներին ուսուցչական պաշտօն վարելով գաւառում եւ պատելով հայկական ըրջանները՝ Միրախորեանը հրատարակեց իր երեք հատորնոց «Ուղեւորութիւնն ի հայրենակ գտառու»։ որ Գ. Սրւաննձտեանցի ուղեգրութիւնների բնոյթը ունի, թէ եւ ոչ նրանց դիտական - բանստիրական բարձր արժէքը։ 90ական թւականներին Միրախորեանը պահտիղեց արտասահման եւ մի ժամանակ ուսուցչութիւն արաւ Ռումանի, ասկա ֆոքչանի ազգային վարժարաններում։ միաժամանակ թղթակցում էր արտասահմանի հայ թէրթերին, գլխաւորապէս Մ. Փորթուգալեանի «Արմենիա»-ին։ Գըրում էր Մ. Կ. Միրախորեան կամ Մ. Կ. Մ. ստորագրութեամբ։ Ունի նաև անտիպ գրւածքներ ուսմանահայ գաղութի մասին։ Իր կեանքի վերջին տասնամեակներին բոլորովին քաշւած էր ազգային - հասարակական կեանքից։